

Ահաւաստիկ ուրիշ պաշտօնաթուղթ մըն ալ, որ բանասարկեալին մահուն վկայագիրն է .

«1703 նոյեմբեր 19ին, Մարքիալի, քառասունընէինգ տարեկան, կամ գրեթէ անոր մօտ, Պասթիլլի մէջ մեռաւ : Մարքիալիի մարմինը Սբ. Պօղոսի ժողովրդապետութեան մէջ թաղուեցաւ նոյն ամսուն 20ին, ի ներկայութեան Պասթիլլի համարակալ պ. Ռօզարթի եւ վիրաբոյժ պ. Ռէյլհի : »

Ուրեմն խորհրդաւոր մարդը թաղուած է Սբ. Պօղոսի գերեզմանատան մէջ, ուր հանգչած են կ'ըսուի Բապըլէ, Մանսար, Արմանտ Պէժար եւ Մօլիէն, ըստ թաղեցիներու աւանդութեան :

Գերեզմանատունէն շատ քիչ հող մը մնացած է հիմայ. տակաւին ոչինչ շինուած է հոն . անմշակ փոքրիկ ցանկապատ մըն է :

Տանը բնակիչներուն ու նոր կալուածատիրոջ, — որ հինին հակոտնեայ՝ կ'ուզէ մեծ գաղտնիքին վերահասու ըլլալ, — ըսածներուն նայելով՝ Երկաթէ Դիմակաւորին գերեզմանը նոյն ցանկապատին ձախակողմով՝ Երկաթէ Դիմակաւորին գերեզմանը նոյն ցանկապատին ձախակողմով մեան անկիւնը պէտք է եղած ըլլայ, այսինքն երեսը դէպ 'ի Սբ. Պօղոս դարձուցած ու կոնակը փողոցին : Հոն արդէն հողակոյտ մը կայ որուն վրայ խոյակով կոթող մը կը բարձրանայ : Այդ կոթողին վրայ դանակի ծայրովը հետեւեալ բառերը փորագրուած են .

«Հոս կը հանգչի Մարքիալի, Երկաթէ Դիմակով Մարդը : »

Սոյն արձանագրութիւնն օրինակուած է եղեր ուրիշ քարի մը վրայ տեսնուած արձանագրութենէ մը : Հաւանական է որ այդ քարը ցանկապատին մէջ եղած ըլլայ :

Հողակոյտին տակ դանուած նկուղը մտնելու համար սանդուխ մը կայ եղեր ու այդ սանդուխին առաջին աստիճանները ծանօթ են եղեր :

Վերջապէս, շատ մօտէն, հազիւ երկու հարիւր մէթը հեռաւորութեամբ, ստորերկեայ ճամբայ մը կայ եղեր, որ Սբ. Պօղոսի եկեղեցիին հետ կը հաղորդակցի եղեր : Առաջները, մինչեւ հարիւր տարի առաջ, շատ յաճախ կը պատահէր որ եկեղեցիները չըջապատուած ըլլան սառնարակրեայ ճամբաներով : Ինչ որ ալ ըլլայ, — ո՞վ էր այն մարդը որուն անունը չէ գիտցուած :

Արդեօք գերեզմանը բան մը պիտի յայտնէ՞ մեզի այդ մասին :

ՄԱՔՍ ԲԵՅՆՕ

(Le Journal)

ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈԹԻՒՆՆԵՐ ԵՒ ԼՈՒՐԵՐ

— Փայտերը եւ մանաւանդ գերանները փտելէ պահպանելու նոր միջոց մը հնարած են Գերմանիայի մէջ : Կը բաւէ ելեկտրական հոսանք մը անցունել փայտին մէջէն, որպէսզի անոր բովանդակած հիւթը դուրս ելնէ . այսպէսով փտութեան պատճառ եղող սարքէն կազատի փայտը եւ կը դիմանայ դարերով :

— Տաքցուցած վազոններու գործածութիւնը վաճառականութեան տեսակէտով ալ օգտակար ընծայելու վիճակին մէջ դրած են բաւերացիք : Ինչպէս ջերմութենէն աւրուող ուտեստները փոխադրելու համար սառուցեալ վազոններու դրութիւնը կը գործածուի , այսպէս ալ ցրտի ազդեցութենէն վնասուող ուտեստներու համար հարիւրմասնեայ ջերմաչափի $+10^0$ էն ոչ բարձր եւ -3^0 էն ոչ պակաս ջերմութեամբ մասնաւոր վազոններ շրջաբերութեան հանուած են :

— Մեղրաջուրը (mélasse) իբրեւ կազդուրիչ եւ իբրեւ սնունդ ձիերու տալու փորձերը շատ յաջող արդիւնք տուած են : Եւ արդէն դոկտ. Շօլօ բազմաթիւ փորձերով հաստատած է, որ շաքարը վերին աստիճանի արժէք մ'ունի սնունդի տեսակէտով եւ աշխատութենէ յոգնած ջղերը կազդուրելու զօրութիւնն ունի : Այսօր մեղրաջուրը դուարներ սնուցանելու համար եւս կը գործածուի դոհացուցիչ կերպով :

— Վեսուլի բերնէն դուրս ելած շոգիներուն մէջ նկատուած է մեծ քանակութեամբ դալնաջրածնական թթուութեամբ (acide chlorhydrique) : Այս շոգին խտանալով անձրեւի նման վար կը թափի եւ իր պարունակած թթուութիւնն պատճառով բոլորովին կայրէ կը փճացնէ բոյսերը : Խտակական կառավարութիւնը յանձնարարած է երկրին դիտնականներուն որպէսզի այդ անկոչ հիւրին ազդեցութիւնը չէզոքացնող դարման մը գտնեն եւ ազատեն բոյսերը — մանաւանդ որթատունկերը :

— Կասպից ծովի ջրերը նուազելու վրայ են , վերջերս տեղի ունեցած դեանաչարժներու պատճառով :

Պարիսի Արեւելեան Կենդանի Լեզուներու Վարժարանին մէջ այս տարի հայերէնի հետեւողներու թիւն է 11 հոգի , որոնցմէ Ա. դասարանի ուսանողներն են պ. պ. Prud'hon, Oustry, Manuel եւ de Bérard . Բ. դասարանի ուսանողներն են պ. պ. J. Baumgart, Le Gal եւ Henry Simon. Իսկ Գ. դասարանի ուսանողներն են պ. պ. Paul Chevalet, Cuvillier-Fleury, Lelorrain եւ E. Mignot . Գոհութեամբ կը յայտնենք , որ յարգելի Ուսուցչապետը պ. Մէյէ այս տարեշրջանին Եղնիկ եւ Եղիշէ վերլուծել կուտայ իր աշակերտներուն . իսկ յառաջիկայ տարեշրջանէն պիտի սկսի հայերէն աշխարհաբար լեզուի դասեր եւս աւանդել : Դոկտ. Մէյէ քիչ օրէն կաւարտէ հայերէն լեզուի բաղդատական առձեռն քերականութեան մը ձեռագիրը , որ պիտի ապագրուի ֆրանսերէն եւ հայերէն լեզուներով :

Նկարիչ պ. Փանոս Թէրլէմէզեանի յաջողութիւններն ուրախութեամբ կարճանագրենք հոս : Ակադեմի Ժիւլիանի տարեկան մրցումին մասնակցելով Թէրլէմէզեան , առաջինը հանդիսացած եւ յատկացուած 300 ֆր. ի մրցանակն ստացած է : Աւելցնենք նաեւ , որ այս մրցումին մասնակցած են Ակադեմի Ժիւլիանի բոլոր մասնաճիւղերը եւ ամենէն յառաջադէմները միայն :

∞ Պարիսի Société Française d'Histoire de la Médecine կոչուած ընկերութեան անդամ ընտրուած է բանասէր եւ հմուտ բժիշկն Վ. Յ. Թորգոմեան էֆ., որ նոյն գիտնական ընկերութեան պիտի ներկայացնէ հայ բժիշկներու եւ բժշկական գրուածքներու մասին բանասիրական աշխատութիւններ :

∞ Դոկտ. Բ. Խալաթեանց Բերլինի Vorderasiatische Gesellschaft անուն ընկերութեան մարտի 7-ի նստին մէջ կարդացած է «Հայ ժողովրդական դիւցազն • Վէպի մասին» դասախօսութիւն մը, եւ այժմ կը պատրաստուի կարգալ նոյն ընկերութեան մայիսի 9-ի նստին մի ուրիշ դասախօսութիւն — «Մի կարծիք հայ նախարարութեանց ծաղման մասին» :

∞ Journal Asiatique-ի ներկայ տարւան Ա. պրակին մէջ (եր. 137 - 140) կը կարդանք Կ. Յ. Բասմաջեանի մէկ ուսումնասիրութիւնը Կզըլ-Կալէի բեւեռածեւ արձանագրութեան մասին :

∞ Աղեքսանդրիայի աղգայիններէն պ. Միհրան Գալֆայեանին երբորդ կարգի շիյր ու խուշիդ պատուանշանին հետ Պեյութեան աստիճանը շնորհեր է Վեհ. Շահը :

∞ Իգական արուեստներու եւ արհեստներու մեծ Ցուցահանդէս մը տեղի պիտի ունենայ Պարիսի մէջ յառաջիկայ յունիսի 20-15 հետ. : Ցուցահանդէսի բաժանմունքները պիտի լինին 1) Կինը պատմութեան մէջ • 2) Կինը տան մէջ • 3) Տնէն դուրս դործաւոր կինը • 4) Իր տան մէջ արհեստով պարապող կինը • 5) Կինն արուեստներու մէջ • 6) Կինը թատրոնի մէջ • 7) Կինը գիտութիւններու եւ գրականութեան մէջ • 8) Կինն ընկերական տնտեսութեան մէջ :

∞ Հայերէն «դեռ չուսումնասիրուած» ձեռագիրներ գտնուելու հն Դամասկոսի մէջ Օմմիաներու հին մզկիթին բակին մէկ կողմը բարձրացած փոքրիկ շէնքէ մը, կըսէ Le Témoignage թերթը (2 յունի. 1902), քաղելով Die Christliche Welt թերթէն :

∞ Կ. Պօլսի Ղալաթիա թաղի ս. Լուսաւորիչ եկեղեցու մառանէն 1437 թուականը կրող խաչքար մը գտնուել է :

∞ Պոնտոսի թագաւորներէն Միհրդատի (ո՞ր Միհրդատի, — յայտնի չէ,) գանձարանը գտնուել է վերջերս Ա. ք-հիսարի մէջ :

∞ Դոկտ. Ռոսբախ «Եւրոպայի Հայ Ուսանողաց Միութեան» հրատարակելիք օգտաշատ հաւաքածուն համար պատրաստել է Հին-Հյսանի աշխարհագրութիւնը, ֆրանսերէն լեզուով :

∞ Նոր-Ջուղայի մէջ տիկին Վառվառէ Քանանեան իր ամուսնի հանգուցեալ Գէորգ Քանանեանի՝ անունով դպրոց մը բացել է 1901 օգոստոսէն ի վեր :

Ք.

C. Carbonnel